


նուն պ. Յովհաննիսի Խալափեան Շամախեցւոյ՝ յաղագս բազմամեայ հաւատարիմ և արգիւնաւէտ ծառայութեան նորա յաղգային և եկեղեցական գործս. թ. 581:

— Օրհնութեան և մխիթարութեան յանուն եղբայրք Բուդաղեանց ի Բագու, ի մասին մահուան եղբօրն իւրեանց Սմբատայ. թ. 585:

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն պ. Պերճի Պաօշեան՝ առ յորեւեան քառասնամեայ գրական գործունէութեան նորա և ուսուցչութեան. թ. 559:

Հայրապետական պարգևներ:

Երեանի Գեր. փոխ. Թեմակալ Ս. Երեմէս արքեպիսկոպոսի միջնորդութեամբ Հայրապետական Կոնդակաւ ստացան քահանայական լանջախաչեր Գեղարքունեաց Գաւառի Վերին Դարանլուխ գիւղի ծխատէր Նայբանդեան Գէորգ, Էջմիածնի զաւառի Դաղալու գիւղի ծխատէր Վահան և Կոտայից զաւառի գործակալ Քանաքեռ գիւղի ծխատէր Զաքարիա քահանաները. թ. 512, 513, 608:



ԿՐԾՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ԿԵԱՆԳԸ.

«Եւ կեանքն յայտնեցան, և ինքնաւ, և վկայեմք, և պատմեմք ձեզ զյայտնական կեանքն, որ երբ առ Հօր ևւ երեւցաւ մեզ»:^{*}
Ա. Յովն. Ա. 2:

ՇԱՅԵՐԸ եկեղեցին համարում են մի հաստատութիւն, որ անմիջական կապ չունի կեանքի հետ, որ խեղաթիւրում կամ շահագործում է բնական աշխարհային կեանքը մի որոշ դասի՝ հոգեւորական մասնա-

ւորապէս կրօնաւորական, դասակարգի նախապաշարութեան մեծ զանգուշակութեամբ համակերպելու կամ նորա դասակարգային շահերին և եսական ցանկութիւններին բաւականութիւն տալու համար: Սխալ է թէ ուղիղ այդ կարծիքը՝ յամենայն դէպս իրողութիւնն այն է, որ գոնէ մեր ժողովրդի մէջ եկեղեցին կորցրել է ըստ երեւութիւն անմիջական առնչութիւնը կեանքի հետ. այսօր ոչ միայն մեր կրթութեամբն են պատահար կամ լոկ սխալմանակալ յարաբերութեանց պատճառով եկեղեցի մտնում երևում այլ նաեւ միջին դասակարգի նաեւ հասարակ ժողովրդեան մի սառուար մասի համար եկեղեցին միայն պաշտօնապէս գոյութիւն ունի և ի՞նչ, լաւագոյն գէպքում շատերը գեռ նորա ծէսերին ու արարողութիւններին մասնակցում են հայրերից ժառանգութիւն ընդունած պատկառանքով՝ քչերը կգտնուին, որ պարզ հաշիւ տալ կարողանան, թէ ի՞նչ իրական դեր է կատարում նա իրենց իսկական կեանքի իրենց համար կենսական նշանակութիւն ունեցող առօրեայ և յարատե ինքիւրների մէջ: Եւ սակայն տեսնում ենք, որ նոյն եկեղեցին քարոզում է աւետարանիչ առաքելի բերանով, թէ բաւական չէ ինքը սերտ կապ ունի կեանքի հետ այլ և իսկական կեանքը միայն իրան է յայտնուել ինքը միայն կարող է աշխարհի առաջ վկայութիւն դնել և պատմել ու հաստատել, թէ ինչ է կեանքը, ինչպէս և ինչի համար պէտք է ապրեն մարդիկ: Սոքա է արդեօք այդ վկայութիւնը, տեսեք ինչպիսի վստահութեամբ է խօսում առաքելայր. հեռու հազար տարիներ առաջ կատարուածի մասին չէ խօսում նա՝ հին աւանդութիւններով, ականջի լսածով, այլ իւր տեսածն ու զգացածն է պատմում. «Եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց», աւսում է նա մի տող վերեւ. նա տեսել է նա շօշափել, նա իւր բոլոր եղբայրները բերանից էր, որ մի կեանք կայ այս աշխարհից դուրս այս աշխարհից բարձր, մի Երկնաւոր Հօր մօտ, որ այս աշխարհի կեանքի նման չէ՝ անցաւոր, ագեղ ու վշտալի, այլ յաւիտենական է, գեղեցիկ և երանաւէտ, որ սակայն այս աշխարհի մէջ յայտնուել է, նորա մէջ իրականանալ ու երկիրը երկինք դարձնել կամ նո-

^{*} Այս քննարկումով խօսուել է Բագուի ու Լոռայի եկեղեցում, եւ Կիւսակիում.

րա բնակիչներին երկնքում բնակելու համար նախապատրաստել կարող է։ Առաքելաբար պատմում է, և եկեղեցին իւր բազմադարեան զոյութեամբ ուրիշ կոչում չէ ունեցել, բայց եթէ պատմել ու վկայել նոյն կեանքի մասին, աշխատել կենդանի պահելու յաւիտեանական կեանքի ճաշակը աշխարհային ցանկութիւններին ճաշակով մոլորուած մարդկութեան մէջ։ Իսկ որպէս զի հասկանալի լինի մեզ, թէ եկեղեցին յիշաւի այդպիսի կոչում ունի, թէ նա պէտք է շարունակէ ծառայել այդ կոչման և չկայ մի ուրիշը, որ երբ և իցէ այդպիսի կոչում ստանձնել կարողանայ՝ հարկաւոր է նախ հարցնել, թէ ինչ է աշխարհին յայտնուած յաւիտեանական կեանքը և ինչպէս է յայտնուել։

Ի՞նչ է կեանքը ընդհանրապէս՝ ծածուկ չէ ոչ որից, մանուկը, որ լոյս աշխարհ է տեսնում՝ նորա առաջին ու ամենատարրական զգացումն է, թէ ապրում է և պէտք է ձեռքից եկածն անէ ապրել շարունակելու համար։ Այդ զգացումը ստիպում է նորան անմիջապէս ձգել ձեռները ու բանալ բերանը՝ ապրուստի միջոցներ գտնելու համար, և այդ զգացումը հանդիստ չէ տալիս նորան ամբողջ կեանքի ընթացքում։ Բանի դեռ նորա զգայութիւններն են միայն զործում՝ սնունդ է որոնում՝ նա մարմնական աշխարհում։ Բայց ահա շատ չանցած զարթնում է հոգին և նա սկսում է սնունդ որոնել նաև հոգեղ աշխարհում, և տեսնում է, որ թէ մէկ և թէ մանաւանդ միւս տեղում պահանջը շատ աւելի մեծ է քան ինքը կարող է իւր արկար ուժերով բաւականութիւն տալ։ ապրել է ուզում, վայելել կեանքի բոլոր քաղցրութիւնները՝ ըստ կարելւոյն մեծ չափով և երկար ժամանակ։ Բայց իւրաքանչիւր քայլափոխում խոչընդոտներ են ելնում նորա դիմաց, և նա ստիպուած է ոչ միայն բազմութիւ հաճոյքներ զսպել, այլ և անդադար հոգ տանել իւր զիւրարեկ կեանքի պաշտպանութեան համար, որի թելը յանկարծակի ամենաշնչին մի պատահարից կտրուել կարող է։ Նա տեսնում է, որ ամեն վայելք չի նպաստում իւր կեանքի բարգաւաճմանը և յաճախ այն, ինչ որ մարմինն է պահանջում,

զրկանք է ու ապականութիւն հոգու համար, և սկսում է մի ներքին, մի խոր, մի անզուսպ տենչ զգալ դէպի կեանքի այն աղբիւրը, որից կարելի լինէր սեփական կեանքի ծարաւը յաղեցնել, անկորուստ և յաւիտեանական սնունդ ստանալ՝ կատարեալ ներդաշնակութեամբ աճեցնելու իւր կենսական բոլոր զօրութիւնները և ընդունակ դառնալու յաւիտեանական երանաւէտ կեանքի։ Շաղկապէ և հազարաւոր փորձեր ապացուցել են նորան, որ կեանքի այդպիսի աղբիւր զուր է որոնել նիւթական աշխարհի վաղանցուկ բարիքների մէջ, ուստի ստիպուած է մի ուրիշ աշխարհ որոնել՝ աւելի վսեմ, աւելի կայուն, աւելի զեղեցիկ և կատարեալ բարիքներով, և մի զօրութիւն, մի էակ, որ նորան այդ աշխարհի մէջ բնակեցնել և այդ բարիքները առ կարող էր, և ահա նորա մէջ յառաջ է գալիս ու զարգանում այն, որ կրօնական զգացում ենք անուանում՝ հոգու այն ինքնուրոյն զրութիւնը, որ միայն բանական մարդուն է յատուկ և որը՝ ոչ մի անորոշ զգացումն է լոկ, ոչ իրերի հիմքը ճանաչելու ձգտող մտածողութեան մի դարձուած, ոչ կամեցողութեան անլուծելի մի ելեւծը, այլ այդ բոլորը միասին առած, և աւելի քան այդ՝ մարդկային հոգու ամենաբարձր շարժումը, որ կարելի էր «կեանքի տենչ» անուանել և որի մէջ միանում են բոլոր հոգեկան կարողութիւնները՝ կեանքի սկզբնապատճառին որոնելու և ճանաչելու համար, Հասկանալի պէտք է լինի այստեղից, թէ ինչու կրօնը ընդհանուր է բոլոր մարդկութեան, ամէն մարդու մէջ կայ անհրաժեշտաբար կեանքի տենչը, պէտք է լինի ուրեմն և նորանից բղխող կրօնական զգացումը։ Ոմանց մէջ այս, ոմանց մէջ այն ուղղութիւնն է ստանում այդ զգացումը՝ նայելով թէ անհատական ընդունակութիւնները և շրջապատող հանգամանքները աւելի նիւթական թէ դադափարակաւ աշխարհի մէջ ստիպում են կեանքի աղբիւր որոնել։ Շատերը հեռու չեն գնում որոնելու, այլ ստեղծում են շուտով մի կատարելատիպ մի կուռք իրենց համար, որ կարծում են թէ զօրութիւն ունի բաւականութիւն տալու իրենց բոլոր պահանջներին, ուրիշները շարունակում

են անվերջ որոնելի մինչև կգտնեն՝ կգտնեն խեղճանքը։ Բայց որովհետև խեղճանքը, եթէ նա կայ, վեր պէտք է լինի մարդու մաքից և զգացումներից՝ ուրեմն գտնել նորան երբեք չեն կարող, եթէ նա ինքը չյայտնուի ու մտաշնչի չդառնայ մարդու մաքին և զգացումներին։

Եւ Նա իջել ու յայտնուել է ... այդպէս է վկայում առաքեալը, այդպէս է վկայում Բրիստոսի սուրբ եկեղեցին։ Նա յայտնուել է ոչ իբրև ցնորք, իբրև երեսկայական մի տեսութիւն, այլ իբրև կենդանի անձ՝ իբրև աստուածային մի անձ, որ մարդ է, բայց աստուածային կարողութիւններ ունի, ապրում է այս աշխարհում, բայց մի ուրիշ յաւիտենական աշխարհի կեանքով։ Եւ երբ առաքեալն այդ հրաշալի անձին, որ ուրիշ ոչ ոք էր, բայց եթէ մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Բրիստոս — երկար ժամանակ զիտելուց, Նորա երկրաւոր կեանքի երկնաթիւշ ընթացքը քննելուց և Նորա աստուածային բնաւորութիւնը ճանաչելուց յետոյ՝ վկայում է ու պատմում վստահութեամբ, թէ յաւիտենական կեանք է տեսել ու շօշափել յանձին Նորա՝ չէ զառանցում անշուշտ, այլ իւր ներքին և ամենախոր համոզումը, իւր հոգւոյ բոլոր էութիւնը կազմող զգացմունքն է արտայայտում։ Նորա համար հարց չէր այլ ևս, թէ ինչպէ՞ս պէտք է ապրեն մարդիկ և ի՞նչ նպատակով, պատասխանը տուած էր, պէտք է ապրեն այնպէս, ինչպէս Բրիստոս ապրեց, որպէս զի Նորա նման յաւիտենական կեանք ունենան։ Այնպէս — այդ նշանակում է՝ Նորա պէս մաքուր, Նորա պէս ներգաշնակ, Նորա պէս բարոյական կեանքով։ Բրիստոս իւր կեանքով ցոյց էր տուել, որ մարդիկ տիեզերքի Արարչի կամքը այն ժամանակ կատարած, հետեարար իրենց մարդկային կոչմանը ծառայած կամ կատարեալ ներգաշնակութեամբ ապրած ու յաւիտենական կեանքի ճանապարհը գտած կլինին, երբ որ բարոյական կեանք վարեն՝ բարոյականութեան առաջնորդող սկզբունք և կենսատու երակ ընդունելով անձնուէր սէրը։ Նա իւր երկնային վարդապետութեամբ մանրամասնօրէն պարզեց և իւր վսեմ կեանքի օրինակով հաստատեց,

թէ ճշմարիտ Աստուծոյ մօտից ելած բարոյական օրէնքները ինչ պահանջներ են դնում մարդու առաջ, ի՞նչ ուղղութիւն տալիս նորա ընթացքին և զէպի որպիսի նրա պատակ ուղղում։ Իսկ իւր խաչի մահուամբն ու փառաւոր յարութեամբն ապացուցեց, որ բարոյական կեանքը ստորացնել, խեղդել կամ սպանել չի կարելի և որչափ ծանր լինի ճշնշույմը նորա վերայ, որչափ թանձրամած խաւարը նորա շուրջ՝ այնչափ աւելի զօրեղ թափով ոտքի կկանգնէ կրկին և այնչափ աւելի փառաւոր ու վսեմ լոյս կարձակէ իրենից։ Եւ ահա այս զօրութիւնն ու այս լոյսը տեսնողների մէջ ծագեց այն հաւատը, որի վերայ հաստատուած է Բրիստոսի եկեղեցին և կոչուած դժուրքի դռներն անգամ յաղթապարելու։ Ո՛ր է արդեօք այդ հաւատը և դեռ ոյժ ունի՞ Բրիստոսի եկեղեցին, նախ քան դժուրքի դռներին մօտենալը՝ այս աշխարհի փորձութիւններին և մոլորութիւններին, քաղաքակրթուած մարդոց կասկածանքին ու անբարոյական հակումներին՝ անկիրթ մարմնի անտարբերութեանն ու նախապաշարումներին յաղթելու։ — Բայց այս մասին միւս անգամ։



ՄԱՐԿԱՍԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԱԼ

ԹԷՊԻՐՈՍ ՊԵՐԿԵՐ.

Վերեն տեսութիւնը ժամանակ առ ժամանակ երեւան է հանում պատմութեան մէջ այնպիսի մարդիկ, որոնք իրենց բնաւորութեամբ թարմացնում են մարդկութեան բարոյական մթնոլորտը, զօրացնում են մեր մէջ մարդկային արժանաւորութեանց վերայ ունեցած հաւատը և ճշմարտութեան ուղին կորցնողներին ցոյց են տալիս արդարութեան և ճշմարիտ ազատութեան ճանապարհը։ Նախախնամութեան այս առաքեալներէց մէկը պիտի համարել ամերիկացի Թ. Պարկերին՝ երեւելի քարոզիչ և մեծ բարոյագէտ, որի անձնաւորութիւնը շրջապատուած է վստահ առանձնաշատուէ մի լուսով։ Նա իւր գրական ահաղին տաղանդով և իւր բարոյական բարձր բնաւորութեամբ ամէն մի ընթերցողի մէջ յարուստեցում է ջերմ համակրութիւն և յարգանաց